

1850

3 K 23
9-59

γγ - β

0 MAY 2005

11 SEP 2013

3K23

7-59

44.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

14 NOV 2009

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

97663

Կազմեց յեվ ծանորություններով ոճեց

Պ. Մ. ՏՈ.ՀԿԸ.ՐՈՎ

579



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927 թ.

1850

ԿԱԶՄՈՂԻՑ

Մեր որերին, յերբ Զինաստանում ծավալվող անցքերին և մեխանիզմի միայն Խորհրդային Միության աշխատավորների ուշադրությունը, այլ և մյուս յերկրների բանվոր գասակարգի բոլոր հեղափոխական և ազնիվ տարրերի ուշադրությունը, յերբ չին աշխատավորների այդ հերոսական պայքարի այս կամ այն վախճանի հետևանքով կարող և նշանակալի չափերով փոխվել համաշխարհային պատմության հետագա ընթացքը—այս որերին առանձնապես ժամանակին ու հետաքրքրական և ծանոթանալ այն բոլորի հետ, ինչ գրել և ասել և վլագիմիր իլյիչը Զինաստանի մասին; ծանոթանալ այն բանին, թե չինական հեղափոխության բախտը նա ինչպես եւ կապում Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական զարգացման ուղիների հարցի հետ, ինչ գնահատական և տալիս դալիք չինական հեղափոխությանը, նրա շարժիչ ուժերին, նրա կապին՝ ԽՍՀՄ հետ և այլն, և այլն. Խոկ XX դարի անցյալ քառորդում չի յեղել Զինաստանի բախտըն այս կամ այն կերպ շոշափող վոչ մի փոքր իշտե խոշոր անցք, վոր վրիպած լինի Վ. Ի. ուշադրությունից և վորի առթիվ Վ. Ի. իր ջերմ համակրանքն արտահայտած չլինի դեպի Զինաստանի ճնշված աշխատավորական մասսաները, վորոնք պայքարում են իմպերիալիստական պետությունների լծից ազատագրվելու համար: Ներկա ժողովածությունակն եւ հենց այն եւ, վոր արտացոլի Վ. Ի. այդ տեսակետները, տեսանելի կացուցանի նրա վերաբերմունքը դեպի Զինաստանի հեղափոխական շարժումը վերջին 15—20 տարիների ընթացքում: Այս ժողովածութիւնի մեջ հավաքված եւ Վ. Ի. յերկերի ժողովածությունից այն բոլորը, վոր այս կամ այն չափով վերաբերում եւ Զինաստանին և ներկայումս աներկբայելի հետաքրքրություն և ներկայացնում:

Այս նյութը կարգալու ժամանակ հարկավոր եւ հիշել, վոր Վ. Ի. իր ճառերում և հողվածներում միշտ կապում եր Զինաստանի աշխատավորների գրությունը, դերը և պայքարը ամբողջ գաղութային Արևելքի ընդհանուր գրության և այն պայքարի հետ, վոր մզում եւ նա միջազգային իմպերիալիզմի դեմ, դիմելով չինական հեղափոխությունը վոչ թե մեկուսացած, այլ միայն միջազգային հեղափոխության հետ կապակցած և այդ հեղափոխության տեսանկյունով: Այս պատճառով ներկա ժողովածութիւնի մեջ են մտցրած մասամբ նաև այն նյութերը, վորոնք վերաբերում են այն ընդհանուր հարցին, թե ինչ գեր ունի գաղութային Արևելքը համաշխարհային հեղափոխության մեջ:

Ներկա ժողովածուի ամբողջ նյութը դասավորված և ժամանակաշրական կարգով և բաժանված 4 գլխի. 1) Ցարական Ռուսաստանն ու Զինաստանը, 2) 1905 թիվը և 1910—1912 թ. թ. չինական հեղափոխությունը, 3) Պայքար իմպերիալիստների միջն Զինաստանը բաժանելու համար, 4) Գաղութային Արևելքը և նրա դերը համաշխարհային հեղափոխության մեջ:

Վ. Ի. Լենինի հոդվածներից ու ճառերից ներկա ժողովածուի մեջ՝ բերված բոլոր ցիտատների ու հատվածների վերտառությունները, բացի յերեք հատվածից՝ «Զինական պատերազմը», «Վերականգնված Զինաստանը» և «Դեմոկրատիան ու նախոքնիկությունը Զինաստանում», վորոնք ամբողջապես զետեղված են այս ժողովածուի մեջ,— գրել ե ժողովածուի կազմողը՝ դրանց բովանդակության և լենինյան տեքստի վորու համաձայն:

Պ. ՏԱՇԿԱՐՈՎ

I. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՅԵՎ ԶԻՆԱՍՏԱՆԸ

1 . . . «Ամբողջ Յեվրոպայի կապիտալիստներն իրենց թաթերը մեկնեցին դեպի հարյուրավոր միլիոններով բնակեցված աշխարհամասը՝ Ասիան, զորաեղ մինչ այդ միայն Հնդկաստանը, մեկ ել Ասիայի ծայրամասի մի փոքրիկ մասն եր սերտորեն կապված համաշխարհային շուկայի հետ։ Անդրկասալյան ճանապարհն սկսեց «բացել» կապիտալի համար Միջին Ասիան, «Միքիրի մեծ ճանապարհը» (մեծ վոչ միայն իր յերկարությամբ, այլ և կառուցողների կողմից արքունի գրամների անշափելի կողոպուտով, ճանապարհը կառուցող բանվորների անշափելի շահագործությամբ) բացում եր Միքիրը, Յապոնիան սկսեց վերածվել արդյունաբերական ազգի և փորձեց ձեղք բանալ չինական պատի մեջ, հայտնաբերելով այնպիսի մի համեղ պատառ, վորը մեկեն իրենց ատամներով բռնեցին Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և նույնիսկ Իտալիայի կապիտալիստները։

(Յերկերի ժող., հատ. IV, էջ 47. ռուս. հրատ.)

2 . . . «Առատաձեռն ե ռուսական ցարը վոչ թե գեղջուկին ոգնելու խնդրում, այլ վոստիկանական միջոցներ գործադրելու խնդրում այն մարդկանց դեմ, ովքեր իրոք ուզում եյին ոգնել սովորներին։ Առատաձեռն ե նա նաև միլիոններ տալու, վոր շոայլորեն ծախսում ե, վորպեսզի կարելույն չափ յուղալի պատռ ճանկի Զինաստանից։ Յերկու տարվա ընթացքում, — հազորդում ե Վիտտեն, — չինական պատերազմի վրա արտակարգ ծախսերի գումարներից ծախսվել ե 80 միլիոն ռուբլի, «Բացի այդ խիստ շոշափելի գումարներ ել ծախսվել են ի հաշիվ ընթացիկ բյուջեյի։ Ուրեմն բոլորը միասին, յերեկի, մինչև հարյուր միլիոն ռուբլի, յեթե վոչ ավելի։ Գործազուրկ բանվորն ու քաղցած գյուղացին կարող են միիթարվել նրանով, վոր Մանջուրիան հավանաբար մերը կլինի»...

(Յերկերի ժող., հատ. IV, էջ 83. ռուս. հրատ.)

ԶԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուսաստանն ավարտում ե իր պատերազմը Զինաստանի¹ հետ՝ մոքիլիղացիայի յեն յենթարկված մի շարք զինվորական շրջաններ՝ ծախսված են հարյուրավոր միլիոն ռուբլիներ, տաօնյակ հազարավոր զորքեր են ուղարկված Զինաստան, տրված են մի շարք ճակատամարտեր, տարած մի շարք հաղթանակներ, հաղթանակներ, ճիշտ ե, վոչ այնոքան թշնամու կանոնավոր զորքերի նկատմամբ, վորքան չին ապօռամքների և ել ավելի անգեն չինացիների նկատմամբ, վորոնց ջրառ հեղձ եյին անում և կոտորում, կանգ չառնելով մանուկներին և կանանց սպանելու առաջ, ել չենք խոսում պալատների, տների և խանութների կողոպտման մասին։ Յեկ ոռւս կառավարությունը, նրա գեւստորաքարշություն անող թերթերի հետ միասին, հաղթանակ և տոնում, ցնծում ե փառապանծ զորքի նոր սիրագործությունների առթիվ, ցնծում ե յեվրոպական կուլտուրայի առաջ չինական վայրենության պարտվելու առթիվ, ոռւսական «քաղաքակրթիչ միսսիայի» նոր աջողությունների առթիվ։ Հեռավոր Արևելքում։

Սակայն այս ամբողջ ցնծության մեջ չի լսվում գիտակից բանավորների, բազմամիլիոն բանվոր ժողովրդի այդ առաջավոր ներկայացուցիչների ձայնը։ Մինչդեռ նոր հաղթական արշավանքների ամբողջ ծանրությունն իր ուսերի վրա յե տանում հատկապես բանվոր ժողովուրդը։ Նրանից են խլում աշխատողներին՝ յոթ սարի յետև ուղարկելու համար, նրանից են հավաքում առանձնապես բարձրացրած տուրքերը՝ միլիոնավոր ծախսերի համար։ Փորձենք քննել այն հարցը, թե՝ սոցիալիստներն ինչպես պետք ե վերաբերվեն այս պատերազմին, ում շահերի համար ե նա մղվում, վորն ե իսկական նշանակությունն այն քաղաքականության, վորին հետեւում ե ոռւս կառավարությունը։

Մեր կառավարությունն, ամենից առաջ, հավատացնում ե, վորնա նույնիսկ պատերազմ չի մղում Զինաստանի գեմ։ Նա միայն ապօռամքություն ե ճնշում, խաղաղացնում ե խոռվարաներին, ոգնում ե որինական չինական կառավարությանը՝ վերականգնելու որինական կարգը։ Պատերազմ չի հայտարարված, բայց դործի եյությունը դրանով բնավի չի փոխվում, վորովհետեւ պատերազմը, միենույն ե, մղվում ե։ Այժմ տեսնենք, թե ինչից ե առաջացել չինացիների հարձակումը յեվրոպացիների վրա, այդ խսովությունը, վորն այնպիսի բուռն յեռանգով խաղաղացնում են անգլիացիները, ֆրանսիացիները, գերմանացիները, ռուսները, յապոնացիները և ուղիղները։

— «Դեղին ցեղի թշնամանքից՝ գեղի սպիտակ ցեղը», «չինացիների ատելությունից՝ գեղի յեվրոպացիների կուլտուրան և քաղաքակրթությունը (ցիվիլիզացիան)», — հավատացնում ան պատերազմի կողմանակիցները,

Այն, չինացիներն, իրոք, ատում են յեվրոպացիներին, բայց վ՞րայեվրոպացիներին են ատում և ինչի համար։ Յեվրոպական ժողովուրդներին չե, վոր ատում են չինացիները, — նրանց հետ չինացիներն ընդհարումներ չեն ունեցել, — այլ յեվրոպական կապիտալիստներին հնագանդ յեվրոպական կառավարություններին։ Զինացիները կարող եյին արդյոք չատել այն մարդկանց, վորոնք Զինաստան եյին գալիս միայն հարստանալու համար, վորոնք ոգտվում եյին իրենց գովված քաղաքակրթությունից միայն խարեւու, կողոպտելու և բռնության համար, վորոնք Զինաստանի հետ պատերազմ եյին մղում միայն նրա համար, վորպեսզի իրավունք ստանան ժողովրդին թունավորող ափիոնի առետուր անել (Անգլիայի և Ֆրանսիայի պատերազմը Զինաստանի գեմ 1856 թվին), վորոնք կողոպուտի քաղաքականությունը կեղծավորությամբ քողարկում եյին քրիստոնեյության տարածմամբ։ Կողոպուտի այդ քաղաքականությունը Զինաստանի նկատմամբ վաղուց ե, վոր վարում են Յեվրոպայի բուրժուական կառավարությունները, իսկ այժմ նրան (Յեվրոպային) միացավ նաև ոռւս ինքնակալական կառավարությունը։ Կողոպուտի այս քաղաքականությունն ընդունված ե անվանել գաղությային քաղաքականություն։ Յուրաքանչյուր յերկիր, վորնունի աղատ զարդացող կապիտալիստական արդյունաբերությունն, չատշուառվ սկսում ե վորոնել գաղություններ, այսինքն յերկներ, վորտեղ արդյունաբերությունը թույլ ե զարգացած, վորոնք ունեն ավելի կամ պակաս չափով նահապետական կենցաղ, վորտեղ կարելի յե սպառել արդյունաբերության արտադրանքները և դրանով լավ փող աշխատել։ Յեկ մի բուռն կապիտալիստների հարստանալու համար բուրժուական կառավարությունները վարում եյին անվերջ պատերազմներ, գինվորների գնդեր եյին նահատակում վատառողջ արևադարձային (տրոպիկական) յերկներում, ժողովրդից հավաքած դրամներից միլիոններ եյին շառայլում, բնակչությունը հասցնում եյին կատաղի ապստամբությունների և սովամանի։ Վերևինեցեք ճնդիկ բնիկների ապստամբությունը Անգլիայի գեմ, Ճնդկաստանի սովը կամ անգլիացիների այժմ մյան պատերազմը բուրների հետ։

Յեկ ահա այժմ յեվրոպական կապիտալիստների ագահ թաթերը մեկնվել են գեպի Զինաստան։ Համարյա թե ամենից առաջ իր թաթեն և մեկնել ոռւս կառավարությունը, վորն այժմ այնպես կուրծք ե ծեծում իր «անշահասիրությունը» հաստատելու համար, նա անշահասիրաբար առավ Զինաստանի ձեռքից Պորտ-Արտուրը և սկսեց Մանջուրիայում յերկաթուղի կառուցել ոռւս զորքի պաշտպանության տակ։ Մելը մյուսի յետեկց յեվրոպական կառավարություններն այնպիսի ջանասիրությամբ սկսեցին կողոպտել, ախ, ներեցեք, վարձակալել չինական հողեր, նոր հզուց չեց, վոր խոսք ու զյուրյոց բարձրացալ

Զինաստանի բաժանման մասին։ Յեկ յեթե իրենց իրական անունը տանք, ապա պետք ե ասենք, վոր յելքողական կառավարությունները (և ոռւսականը հազիվ թե առաջինը չե դրանց մեջ) արդեն սկսել են Զինաստանի բաժանումը։ Բայց նրանք բաժանումն սկսել են վոչ թե ափաշկարա, այլ գաղտագողի, ինչպես գողեր։ Նրանք սկսել են կողոպտել Զինաստանը, ինչպես մեռելին են կողոպտում, իսկ յերբ այդ կարծեցյալ մեռելը փորձեց դիմադրություն ցույց տալ—նրանք հարձակվեցին նրա վրա ինչպես վայրենի գաղաններ, հրդեհելով ամբողջ գյուղեր, ջրահեղձ անելով Ամուր գետում, գնդակահարելով և սվինի վրա հաներլով անզեն բնակիչներին, նրանց կանանց ու յերեխաններին։ Յեկ այդ բոլոր քրիստոնեական սիրազործություններին հետեւմ են աղաղակներն ընդդեմ վայրենի չինացիների, վորոնք հանդգնում են ձեռք բարձրացնել քաղաքակիրթ յելքողացիների վրա։ «Նյու. Զժուանի զրագումը և ոռւս զորքերը Մանջուրիայի սահմաններ մտցնելը—Ժամանակավոր միջոցներ են, —հայտարարում ե ոռւս ինքնակալական կառավարությունը 1900 թ. ոգոստոսի 12-ի իր շրջաբերական հուշագրում, վորն ուղղված ե պետություններին։ —այդ միջոցներին դիմելու պատճառը բացառապես չին խոռվարանների ագրեսիվ գործողությունները յետ մզելու անհրաժեշտությունն ե»։ Նրանք (այդ միջոցները) «բնավ չեն կարող վորեն շահադիտական պլանի ապացույց հանդիսանալ, վորպիսի պլանները բոլորովին խորթ են կայսերական կառավարության քաղաքականությանը»։

Խեզմ կայսերական կառավարություն։ Նա այնպես քրիստոնեաբար անշահասեր ե, իսկ նրան այնպես անարդարացի կերպով են վերաբերվում։ Նա անշահասիրաբար միքանի տարի սրանից առաջ հափշտակեց Պորտ-Արտուրը և այժմ անշահասիրաբար հափշտակում ե Մանջուրիան, նա անշահասիրաբար հեղեղել ե Ռուսաստանին սահմանակից չինական նահանգները կապալառուների, ինժեներների և սպաների վորմակով, վորոնք իրենց վերաբերմունքով խոռվության են հասցըրել նույնիսկ իրենց խոնարհությամբ հայտնի չինացիներին։

Զինական յերկաթուղու կառուցման ժամանակ չին բանվորներին վճարում եյին 10 կոպեկ որապահիկ, —սրանից ել լավ անշահասիրություն Ռուսաստանի կողմից։

Բայց ինչով բացատրել, վոր մեր կառավարությունն այսպիսի խելագար քաղաքականություն ե գարում Զինաստանում։ Ո՞ւմ համար ե շահավետ այդ քաղաքականությունը։ —Նա շահավետ ե մի բուռն կապիտալիստ-տուղերի համար, վորոնք առեստական գործեր ունեն Զինաստանի հետ, մի բուռն գործարանատերերի համար, վորոնք ապրանք են արտադրում ասիստական շուկայի համար, մի բուռն կապալառուների համար, վորոնք շամեցուցիչ գումարներ են շահում շտապու-

զական ռազմական պատվերներից (սպառագինման առարկաներ, զորքերի համար պաշարեղեն և այլն արտադրող վորոշ գործարաններ այժմ աշխատում են ամբողջ թափով և ընդունում են հարյուրափոր նոր որամշակներ)։ Այդպիսի քաղաքականությունը շահավետ ե մի բուռն աղնվականների համար, վորոնք բարձր պաշտօններ ունեն քաղաքացիական և զինվորական ծառայության ասպարիզում։ Նրանց հարկավոր ե արկածների քաղաքականություն, վորովհետև այդտեղ կարելի յե առաջ գնաւ, կարյերա անել՝ հոչակվել իրանց կատարած ռսխրագործություններով։ Կապիտալիստների և աստիճանավոր աղվեսների այդ խմբակի շահերին մեր կառավարությունն, առանց տատանվելու, զոհաբերում ե ամբողջ ժողովրդի շահերը։ Ինքնակալական ցարական կառավարությունն այս դեպքում ել, ինչպես և միշտ, մնում ե կապիտալիստ-տուղերի և աղնվականների առաջ քծնող անպատճախանատու պաշտոնյանների կառավարություն։ Ի՞նչ շահ ունի ոռւս բանվոր դասկարգը և ամբողջ բանվոր ժողովուրդը Զինաստանում կատարվող նվաճումներից։ Հազարավոր բայցայված ընտանիքներ, վորոնց աշխատողներին խլել են պատերազմ տանելու համար, պետական ծախսերի ու պատճառությունների ավելանալը, բանվորների գրության վատանալը, գյուղացիության ավելի մեծ չափերի համոզ մահացությունը, սովոր Սիբիրում—ահա թե ինչ ե խոստանում բերել և արդեն բերում ե չինական պատերազմը։ Ամբողջ ոռւսական մամուլը, բոլոր լրագրերն ու հանդեսները ճորտի վիճակում են գտնվում, նրանք վոչինչ չեն կարող տպել առանց կառավարական չինովակների թույլտվության—և այդ պատճառով մենք ճշշգրիտ տեղեկություններ չունենք այն մասին, թե ինչ ե նստառ ժողովրդին չինական պատերազմը, բայց կասկած չկա, վոր նա պահանջում ե բազավ հարյուրափոր միլիոն ուուբիթերի դրամական ծախսեր։ Տեղեկություններ կան այն մասին, վոր կառավարությունը մեկին պատերազմի համար տվել ե 150 միլիոն ուուբիլի մի չինապարակված հրամանով, այնուհետև պատերազմի ընթացիկ ծախսերն ել յուրաքանչյուր յերեք կամ չորս որը կլանում են մեկական միլիոն ուուբիլի։ Յեկ այդ հսկայական գումարները շարտում ե այն կառավարությունը, վորն անվերջ խոռվում եր սովոր գյուղացիներին տրվող նպաստները, սահկարկելով յուրաքանչյուր կոպեկի համար, վորը դրամ չի գտնում ժողովրդական լուսավորության համար, վորը, ուղածդ կուլակի պես, քամում ե բանվորների կյանքի հյութերը արքունական գործարաններում, մասր ծառայողների հյութերը փոստային հաստատություններում և այլն։ Ֆինանսների մինիստը Վիտահարար կայտարարեց, վոր առ 1-ն հունվարի 1900 թվի գանձարանում կա 250 միլիոն ուուբիլի աղատ առկա

գումար—այժմ այդ գրամմերն արդեն չկան, նրանք ծախսվել են պատերազմի վրա, կառավարությունը վարկեր ե փնտում, ավելացնում ե հարկերը, հրաժարվում ե անհրաժեշտ ծախսերից՝ դրամ չունենալու պատճառով. դադարեցնում ե յերկաթուղիների կառուցումը: Ցարական կառավարությանը սնանկություն ե սպառնում, իսկ նա նվաճումների քաղաքականության ե տալիս իրեն,—մի քաղաքականություն, վորը վոչ միայն հսկայական դրամական միջոցներ ե պահանջում, այլ և սպառնում ե ել ավելի վտանգավոր պատերազմների մեջ գցել: Զինաստանին վրա պրծած յեվրոպական պետություններն արդեն սկսում են վիճել ավարը բաժանելու պատճառով, և վոչվոք ի վիճակի չե ասել՝ ինչով կվերջանան այդ վեճերը: Բայց ցարական կառավարության քաղաքականությունը Զինաստանում ժողովրդական շահերի պատճառ չարում չե միայն, —նա ձգտում ե անբարոյականացնել ժողովրդական մասսաների քաղաքական գիտակցությունը: Այն կառավարությունները, վորոնք միայն սփինների ուժով են կանգուն մնում, վորոնք միշտ կարիք են ունենում զապելու կամ ձնշելու ժողովրդական զայրույթը, վազուց արդեն գիտակցել են այն ճշմարտությունը, վոր ժողովրդական անբավականությունը վոչնչացնելով չես վերցնի. հարկավոր ե փորձել այդ անբավականությունը հեռացնել կառավարությունից և ուրիշ կողմ դարձնել: Որինակ՝ թշնամանք են հրահրում դեպի հրեաները, փողոցային թերթերը հալածում են հրեաներին, կարծես թե հրեա բանվորը չի տառապում այնպես, ինչպես և ուս բանվորը, կապիտալի և գուտիկանական կառավարության ձնշումից: Ներկայումս մամուլում արշավանք ե բարձրացված չինացիների գեմ, բղավում են վայրենի գեղին ցեղի մասին, նրա ատելության մասին դեպի քաղաքակրթությունը, Ռուսաստանի անելիքների մասին լուսավորության ասպարիզում, այն մասին, թե վորպիսի վոգեորությամբ են ճակատամարտ գնում ուս զինվորները, և այլն և այլն: Կառավարության և դրամի տոպրակի առաջ սողացող ժուրնալիստները կաշուց գուրս են գալիք, վորպիսի ատելություն վառեն ժողովրդի մեջ գեպի Զինաստանը: Բայց չին ժողովուրդը վոչնչով և յերբեք չի ձնշել ուս ժողովրդին. չին ժողովուրդն ինքն ե տառապում այն շարիքներից, վորոնց ձեռքին ուժասպառ ե լինում և ուս ժողովուրդը, —այն ե՝ ասիական կառավարության ձեռքին, վորը քաղցած գյուղացիների ջանից քամելով և հանում տուրքերը և ռազմական ուժով ե ձնշում ապրաւամբության յուրաքանչյուր ձգտում.— տառապում ե կապիտալի ճընշումից, վորը Միջերկրական թագավորության սահմաններն ել ե վոտք դրել:

Ուս բանվոր դասակարգն ոկտոս ե թոթափել այն քաղաքական ծեծկածությունն ու տգիտությունը, վորի մեջ ե գտնվում ժողովրդա-

կան մասսան: Այս պատճառով բոլոր գիտակից բանվորների վրա պարտք ե դրվում բոլոր ուժերով վոտքի յելնել նրանց գեմ, ովքեր ազգային ատելություն են վառում և հեռացնում են բանվոր ժողովրդի ուշադրությունն իր իսկական թշնամիներից: Ցարական կառավարության քաղաքականությունը Զինաստանում հանցագործ քաղաքականություններ, վորն ել ավելի յե քայլայում ժողովրդին, ել ավելի անբարոյականացնում և ձնշումն ընթան: Ցարական կառավարությունը վոչ միայն մերժողովրդին ե ստրկության մեջ պահում, —նա մերժողովրդին ուղարկում ե ձնշելու ուրիշ, իրենց ստրկության դեմ ապստամբող ժողովուրդներին (ինչպես արեց 1849 թվին, յերբ ուս զորքերը հեղափոխություններին ձնշում Հունգարիայում): Այդ կառավարությունն վոչ միայն ոգանում ե ուս կապիտալիստներին՝ շահագործելու իրենց բանվորներին և կապում ե բանվորների ձեռքերը, —վորպիսի նրանք չհամարձակվեն համախմբվել և պաշտպանվել, —նա զինվորներ ե ուղարկում կողոպատելու ուրիշ ժողովուրդներին՝ հանուն մի բուռն հարուստների ու ավագանիի շահերի: Այն նոր լծից, վոր զնում ե պատերազմը բանվոր ժողովրդի վզին, կա ազատվելու միայն մի միջոց՝ հրավիրել ժողովրդական ներկայացուցիչներին, վորոնք վերջ կդնելին կառավարության ինքնահեծանությանը և կհարկադրելին նրան հաշվի առնել վոչ միայն պալատական ավագակախմբի շահերը:

(«Խոկրա», № 1, 1900 թ. դեկտեմբեր. Յերկերի ժող. հատ. IV, եջ 16-առև. հրատ.)

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ ԴԱՐՄՎՈՐ ԼՃԱՑՄԱՆ ՅԵՐԿՐՈՒՄ

II. 1905 ԹԻՎԸ ՅԵՎ 1910—1912 Թ. Թ. ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

«... Համաշխարհային կապիտալիզմը և 1905 թվի ոռւսական շարժումը վերջնականապես զարթեցրին Ասիան։ Ծեծկված, միջնադարյան լճացման մեջ վայրենացած բնակչության հարյուրավոր միլիոններն արթնացան նոր կյանքով ապրելու և պայքարելու հանուն մարդու այբուբենական իրավունքների, հանուն գեմուկրատիայի»։

Յերկրագնդի առաջավոր յերկրների բանվորները հետաքըրաքությամբ հետևում են համաշխարհային ազատագրական շարժման այդ զորեղ աճմանը՝ իր բոլոր ձեռքով, աշխարհի բոլոր մասերում։ Յերկրոպայի բուրժուազիան, վախեցած բանվորական շարժման զորությունից, նետվեց ուեակցիայի, ուղարկանության, պատովշխնայի և խավարապաշտության գիրկը։ Բայց այդ վողջվող փոտող բուրժուազիային փոխարինելու յե գալիս յեվրոպական յերկրների պրոլետարիատը և ասիական յերկրների դեմոկրատիան՝ յերիտասարդ և լի հավատով գեպի իր ուժերը ու վետահությամբ՝ գեպի մասսաները։

Ասիայի արթնանալը և Յերկրոպայի առաջավոր պլութատրիատի կողմից իշխանություն ձեռք բերելու համար պայքար սկըսելը՝ նշանավոր են դարձնում ՀՀ դարի սկզբում բացված համաշխարհային պատմության նոր շրջանը»։

(Յերկրի ժող., հատ. XI, էջ 24, ոռւս. հրատ.)

ԴՐՈՒՅԱՍՏԱՆԻ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ—ԴԵՊԻ ԶԻՆԱՍՏԱՆԻ

1910—1912 Թ. Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

... 1905 թիվը ցույց տվեց, թե ինչպիսին պետք է լինի ոռւսական հեղափոխության արտաքին քաղաքականությունը։ Այս փաստն այն փաստն է, զոր 1905 թվի հոկտեմբերի 17-ից հետո վիեննայում և Պրադայում սկսվեցին մասսայական խլրտումներ փողոցներում և բարբիւդիների կառուցում։

1905 թիվը հետո յեկավ 1908. թիվը Թյուրքիայում, 1909 թիվը՝ Պարսկաստանում և 1910 թիվը՝ Զինաստանում²...

(Խորհուրդների I համագումարում պատերազմի մասինցասած ձառից։ Յերկ. ժող., հատ. XIV, մաս 1-ին, էջ 317, ոռւս. հրատ.)

Շատ ժամանակ ե անցել այն որից, յերբ Զինաստանը դարավոր լիակատար լճացման յերկրների որինակի հոչակ ուներ։ Իսկ այժմ Զինաստանում յեռում ե քաղաքական կյանքը, խլրտում ե հանրային շարժումը և դեմոկրատական վերելքը։ 1905 թվականի ոռւսական շարժումից հետո գեմոկրատական հեղափոխությունն ընդգրկեց ամբողջ Ասիան, Թյուրքիան, Պարսկաստանը, Զինաստանը... Անում ե խմբումը անգլիական Հնդկաստանում։

(«Ասիայի արթնացումը հողվածից։ Յերկ. ժող., հատ. XI, էջ 23. ոռւս. հրատ.»)

ԲՈՒԽՏԻՑ ԴԵՊԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

... Զինաստանում հեղափոխական շարժումը միջնադարի դեմ՝ իր գոյությունն առանձին ուժով զգացնել տվեց վերջին ամիսներին։ Ճիշտե, գեռևս վոչինչ վորոշ բան չի կարելի ասել հատկապես տվյալ շարժման մասին, — այնքան քիչ կան նրա մասին տեղեկություններ, և այնքան առատ են լուրերը Զինաստանի զանազան վայրերում տեղի ունեցած խոռվությունների մասին, — բայց «նոր վողու» և «յերկրոպական հովերի» ուժեղ թափով աճելը Զինաստանում, մանավանդ ոռւս-յապոնական պատերազմից հետո, կասկածից վեր և. հետեւաչես, անխուսափելի յե նաև հին չինական բունտերի³ փոխվելը՝ գիտակցական դեմոկրատական շարժման, վոր այս անգամ գաղութային կողոպուտի միքանի մասնակիցներ իրենց անհանգստացրած զգացին, այդ յերեվում ե ֆրանսիացիների վարմունքից Հնդկա-Զինում։ Նրանք ոգնում ելին չինական «պատմական իշխանությանը»⁴ հեղափոխականներին պատժելու խնդրում, նրանք միաժամանակ յերկյուղ եյին կրում, զոր կարող ե խախտվել Զինաստանի կողքին գանվող «իրենց» ասիական կալվածների ամբողջությունը...»

(«Այրվող նյութը համաշխարհային քաղաքականության մեջ՝ հողվածից։ Յերկ. ժող., հատ. XI, մաս 1-ին, էջ 100. ոռւս. հրատ.»)

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՅԵՎ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Զինական հանրապետության ժամանակավոր նախագահ Սուն-Յաթ-Սենի հողվածը, վորին մենք ծանոթանում ենք Բյոյուսելի սուցիալիստական «Լե բուրժ» («Ժողովուրդ») թերթում, ներկայանում ե միանգամայն բացառիկ հետաքրքրականության մեջ, ուսւներիս համար։

Առաջն ասում ե՝ կողմանակի դիտողն ավելի լավ ե տեսնում։ Սուն-Յաթ-Սենը չափազանց հետաքրքրական «կողմանակի» դիտող ե, վորով-

հետեւ, յեվրոպականորեն կրթված մարդ լինելով, նա, ըստ յերևութիւն, ըստըսպիկին չի ճանաչում Ռուսաստանը: Յեզ ահա այդ յեվրոպականութեն կրթված ներկայացուցիչը մարտական և հաղթական չինական գեմոկրատիայի, վորը հանրապետություն և նվաճել իր համար, դնում և մեր առաջ—միանգամայն անկախ Ռուսաստանից, ոռուսական փորձից, ոռուսական գրականությունից—զուտ ոռուսական հարցեր: Առաջավոր չին դեմոկրատը դատում և տառացիորեն վորպես ռուս մարդ: Նրա նմանությունը ռուս նարոդնիկին այնքան մեծ է, վոր հասնում և հիմնական մտքերի և մի ամբողջ շարք առանձին արտահայտությունների լինակատար նույնացման:

Կողմնակի դիտողն ավելի լավ կտեսնի: Զինական մեծ դեմոկրատիայի պլատֆորմը—վորովհետեւ հենց այդպիսի պլատֆորմ և հանդիսանում Սուն-Ցաթ-Շենի հոդվածը—հարկադրում և մեզ և հարմար առիթ և տալիս ևս մեկ անգամ, նոր համաշխարհային անցքերի տեսանկյունով, քննարկել դեմոկրատիզմի և նարոդնիկության փոխհարաբերության հարցը Ասիայի արդի բուրժուական հեղափոխությունների մեջ: Ի՞ա մեկն և այն ամենալուրջ հարցերից, վորոնք կանգնեցին Ռուսաստանի առաջ նրա հեղափոխական եպոխայում, վոր սկըսվեց 1905 թվին: Յեզ վոչ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ Ասիայի առաջ, ինչպես յերևում և Զինական հանրապետության ժամանակավոր նախագահի պլատֆորմից, մանավանդ, յեթե այդ պլատֆորմը համագրենք հեղափոխական անցքերի զարգացմանը Ռուսաստանում, Թյուրքիայում, Պարսկաստանում, Զինաստանում: Ռուսաստանը խիստ շատ և խիստ եյական տեսակետներից, անտարակույս, մեկն և ասիական պետություններից և այն ել մեկն ամենավայրենի, միջնադարյան, ամսթալիորեն-հետամեաց՝ ասիական պետություններից:

Ռուսական բուրժուական դեմոկրատիան նարոդնիկական գույնի յե ներկված,—սկսած նրա հեռավոր և մենակ ռահվիրա, ազնվական Փերցենից, և վերջացրած նրա մասսայական ներկայացուցիչներով, Փյուղացիական Միության անդամներով՝ 1905 թ., առաջին յերեք Դումաների աշխատավորական պատգամավորներով՝ 1906—1912 թ.: Այժմ մենք տեսնում ենք, վոր բոլորին նույնասեռ նարոդնիկական գույնի յե ներկված բուրժուական դեմոկրատիան Զինաստանում: Այժմ Սուն-Ցաթ-Շենի որինակով ծանոթանանք այն բանին, թե վորն և սոցիալական նշանակությունն այն գաղափարներից, վորոնց ծնել և խորունկ հեղափոխական շարժումը հարյուրավոր և հարյուրավոր միլիոն մարդկանց, վորոնք այժմ վերջնականապես առնվում են համաշխարհային կապիտալիստական քաղաքականության հոսանքի մեջ:

Մարտական, անկեղծ դեմոկրատիզմով և տոգորված Սուն-Ցաթ-Շենի պլատֆորմի յուրաքանչյուր տողը: Լիակատար ըմբռնում ըստ-

այահական» հեղափոխության անբավարարության: Ապոլիտիզմի կամ գեպի քաղաքական ազատությունը թեկուղ արհամարհական վերաբերմունքի և վոչ մի նշույլ նա չի կարող նույնիսկ յենթագրել, թե կարող են զուգահեռաբար գոյություն ունենալ չինական ինքնակալությունը և չինական սոցիալական ռեֆորմը», չինական սահմանադրական բարենորոգությունները և այլն: Ամբողջական դեմոկրատիզմ՝ հանրապետություն պահանջելու հետ միասին: Մասսաների դրության, մասսայական պայքարի հարցի ճիշտ դրվագը, ջերմ համակրանք դեպի աշխատավոր մասսաներն ու շահագործողները, հավատ դեպի նրանց արդարացի լինելը, գեպի նրանց ուժը:

Մեր առջնն և իրոք մեծ իդեոլոգիան իրոք մեծ ժողովրդի, վորն իսկապես կարողանում և վոչ միայն իր դարավոր ստրկությունը վողբար, վոչ միայն յերազել ազատության և հավասարության մասին, այլև կուվել Զինաստանի դարավոր հարստահարիչների դիմ: Խնդքնաբերաբար միտք և ծագում զինումդ՝ համեմատելու վայրենի, մեռյալ, ասիական Զինաստանի հանրապետության ժամանակավոր նախագահին առաջավոր կալտուրայի յերկների, Յեվրոպայի և Ամերիկայի հանրապետությունների զանազան նախագահների հետ: Այդտեղերի հանրապետությունների նախագահները—բոլորն ել գործի մարդիկ են, գործականներ կամ տիկնիկներ բուրժուակայի ձեռքերին, վորը (բուրժուազիան) մինչև իր ուշն ու ծուծը փտած է, վոտից գլուխ ծածկված և ցեխով ու արյունով, վոչ թե փաղիշահների ու բողդիխանների արյունով, այլ գործադուների համար, պրոգրեսի և քաղաքակալի թության համար գնդակահարված բանվորների արյունով: Այդտեղերի նախագահները ներկայացուցիչներն են բուրժուազիայի, վորը վաղուց իվեր և հրաժարվել իր յերիտասարդության բոլոր իդեալներից, վորը պոռնկացրել և իրեն մինչև վերջին աստիճան, իրեն ամբողջապես վաճառել և միլիոնատերերին, բուրժուացած ֆեռդալներին և այլն:

Հանրապետության այստեղի, ասիական ժամանակավոր նախագահը հեղափոխական դեմոկրատ և, լի ազնվությամբ և հերոսությամբ, վորը հատուկ և այնպիսի դասակարգի, վոր գնում և վոչ թե լիոնիվար, այլ լեռնիվեր, վորը չի վախենում ապագայից, այլ հավատում և նրան և անձնվիրաբար պայքարում և հանուն այդ ապագայի, —հատուկ այնպիսի դասակարգի, վորն ատում և անցյալը և կարող և դեն շպրտել նրա մեռյալ և ամեն մի կենդանի շունչ խեղզող փտածությունը, և վոչ թե ամուր կառչել անցյալի պահպանման ու վերականգնման գաղափարին՝ իրենց արտանությունները պահպանելու համար, Ուրեմնինչ: Արդյոյր այս չի նշանակում, վոր փտել և մատերիալիստական Արևմուտքը, և վոր լույսը փայլում և միայն միստիկ, կրօնասեր Արեգելքից: —Վահ: Ճիշտ դրա հակառակը, Այդ նշանակում և, վոր Արևելքը

վերջնականապես Արևմուտքի ճանապարհն ե բռնել, վոր նոր հարյուրավոր ու հարյուրավոր միլիոն մարդիկ այսուենեաւ մասնակցելու յեն այն իդեալների համար մղվող պայքարին, վորպիսի իդեալների իր ջանքերով հասել ե Արևմուտքը: Փտել ե արևմտյան բուրժուազիան, վորի առաջ արդեն կանգնած ե նրա գերեզմանափորը—պրոլետարիատը: Իսկ Ասիայում դեռևս կա մի բուրժուազիա, վորն ընդունակ ե ներկայացնելու անկեղծ, մարտական, հետեւղական դեմոկրատիա,—մեծ ընկերը XVIII դարի վերջի Ֆրանսիայի մեծ քարոզիչների և մեծ գործիչների:

Դեռևս պատմականորեն առաջադիմական գործի ընդունակ ասիական բուրժուազիայի այդ գլխավոր ներկայացուցիչը կամ գլխավոր սոցիալական հենարանը՝ գյուղացին եւ Նրա կողքին արդեն կա ազատամիտ բուրժուազիան, վորի գործիչները, Յուանշիկայի պես, ամենից շատ դավաճանության են ընդունակ: Յերեկ նրանք վախենում եյին բողոքիսանից, ստորաքարշություն եյին անում նրա առաջ: հետո, յերբ տեսան հեղափոխական դեմոկրատիայի ուժը, յերբ գդացին նրա հաղթանակը՝ դավաճանուցին բողոքիսանին, իսկ վաղը կդավաճանեն դեմոկրատներին, մի վորևս հին կամ նոր «սահմանադրական» բողոքիսանի հետ համաձայնության գալու համար:

Առանց բարձր, անկեղծ դեմոկրատական խոյացման, վորը բոցագառում ե աշխատավոր մասսաներին և հրաշքներ գործելու ընդունակ ե դարձնում նրանց և վորը յերեսում ե Սուն-Ցաթ-Սենի պլատֆորմի յուրաքանչյուր քրազի մեջ, անկարելի կլիներ չին ժողովրդի իսկական ազատագրումը դարավոր ստրկությունից:

Բայց մարտական դեմոկրատիզմի այս իդեոլոգիան չին նարոդնիկի մեջ հյուսվում ե, նախ և առաջ, սոցիալիստական պատրանքների հետ, Զինաստանում կապիտալիզմից խուսափելու, կապիտալիզմը կանխելու հույսի հետ, յերկրորդ՝ արմատական ազրարային ռեֆորմի պլանի ու քարոզի հետ: Հենց այս յերկու վերջին գաղափարական քաղաքական հոսանքներն են այն տարրը, վորը նարոդնիկություն ե կազմում, այդ հասկացողության սպեցիֆիկ նշանակությամբ, այսինքն այն ամենով, ինչով նա տարբերվում ե դեմոկրատիզմից, ինչով ավելի յերեմոկրատիզմից:

Ի՞նչ ծագում ե նշանակություն ունեն այդ հոսանքները: Զինական դեմոկրատիան չեր կարող տապալել Զինաստանում հին կարգերը և հանրապետություն նվաճել առանց մասսաների հոգեկան և հեղափոխական հսկայական վերելքի: Այդպիսի վերը լիքը յենթադրում ե և ծնեցնում ամենաանկեղծ համակրանքը դեպի աշխատավոր մասսաների դրությունը, ամենաբռուն ատելությունը դեպի նրանց կեղերիչներն ու շահագործողները: Իսկ Յեկարոպայում և Ամերիկայում, վորից առա-

ջավոր չինացիները, բոլոր չինացիները, ինչ չափով վոր նրանք ապրել են այդ վերելքը, փոխ են առել իրենց ազատագրական գաղափարները, հերթի յե կանգնած արդին ազատագրումը բուրժուազիայից, այսինքն սոցիալիզմը: Այդտեղից անխուսափելիորեն ծագում ե չին դեմոկրատների համակրանքը դեպի սոցիալիզմը, նրանց սուբյետիվ սոցիալիզմը:

Նրանք սուբյեկտիվորեն սոցիալիստներ են, վորովհետև նրանք դեմ են մասսաների կեղեքման և շահագործման: Բայց Զինաստանի հետամնաց յերկրագործական, կիսաֆեոդուլական յերկրի ոբյեկտիվ պայմանները համարյա կես միլիարդանոց ժողովրդի կյանքում հերթի յեն դնում այդ կեղեքման և այդ շահագործման միայն մի վորոշ, պատմականորեն տարօրինակ տեսակը, այն եւ ֆեոդալիզմը: Ֆեոդալիզմը հիմվում ե յերկրագործական կենցաղի և բնատնտեսության տիրապետության վրա: Չին գյուղացու ֆեոդալական շահագործման աղբաւոր եր հանգիսանում գյուղացուն այս կամ այն ձևով հողին կապելու: այդ շահագործման քաղաքական արտահայտիչները ֆեոդալներն եյին, բոլորը միասին և յուրաքանչյուրն առանձին վերցրած, այդ սիստեմի գլուխ կանգնած բողոքիսանի հետ միասին:

Յեվ ահա բանից դուրս ե գալիս, վոր չին դեմոկրատի սուբյեկտիվ սոցիալիստական մտորումներից ու ծրագրերից իրականում ստացվում ե միմիայն «անշարժ սեփականության բոլոր արյունալից հիմքերի փոփոխման» ծրագիրը, միմիայն ֆեոդալական շահագործման վերացման ծրագիրը:

Այս ե Սուն-Ցաթ-Սենի նարոդնիկության եյությունը, նրա առաջադիմական, մարտական, բուրժուական դեմոկրատիկ ազրարային բարեփոխությունների հեղափոխական ծրագրի և նրա իրը թե սոցիալիստական թեորիայի եյուրունը:

Այս թեորիան, յեթե քննենք այն դոկտրինայի տեսակետից, մանրութուական «սոցիալիստ»-ուակացիոների թեորիա յե: Վորովհետև միանգամայն ռեակցիոն և այն պատրանքը, թե Զինաստանում կարելի յե «կանխելու կապիտալիզմը», թե Զինաստանում, ուրա հետամնացության հետևանքով, հեշտ կլինի «սոցիալական հեղափոխությունը» և այլն. և Սուն-Ցաթ-Սենը անորինակելի, կարելի յե առել կուսական միամտությամբ ինքն և զլխովին ջախջախում իր ռեակցիոն նարոդնիկական թեորիան, ընդունելով այն, ինչ կյանքն ե հարկադրում ընդունել, այն եւ վոր «Զինաստանը կանգնած ե հակայակոն արդյունաբերական» (այսինքն կապիտալիստական) զարգացման նախորյակին», վոր Զինաստանում «առևտությը» (այսինքն կապիտալիզմը) զարդարության շատ Շանհայներ, այսինքն կապիտալիստական հարստության և շահագործողները:

պլութարական կարիքի ու աղքատության միջոնանոց բնակչություն
ունեցող կենտրոններ:

Բայց հարց ե ծագում,—սրանում ե հարցի մեխը, այս ե ամենա-
հետաքրքրական կետը, զորի առաջ հաճախ կանգ ե առնում խուզած
և կրտած աղատամիտ քվազի-մարքսիզմը, — հարց ե ծագում՝ Սուն-Յաթ-
Սենն իր ռեակցիոն տնտեսական թեորիայի հիման վրա արդյոք իրոք
ռեակցիոն ազգարային ծրագիր ե պաշտպանում: Բանն ել հենց այն
ե, զոր վոչ: Զինաստանի հանրային հարաբերությունների դիմակաթի-
կան ել հենց այն ե, զոր չին դեմոկրատաները, անկեղծորեն համակրե-
լով սոցիալիզմին թելրոպայում, այդ սոցիալիզմը վերածել են ռեակ-
ցիոն թեորիայի և կապիտալիզմը «կանխելուն» վերաբերող այդ ռե-
ակցիոն թեորիայի ձիման վրա կիրառում են զուտ կապիտալիստական
մաքսիմալ չափերով կապիտալիստական-ազգարային ծրագիր:

Ցեղ իրոք, ինչի՞ յե հանգում «տնտեսական հեղափոխությունը»,
վորի մասին Սուն-Յաթ-Սենն այնպիս ճոխ ու մութ լեզվով ե խոսում
իր հոդվածի սկզբում:

Ռենտան պետությանը հանձնելուն, այսինքն հողի ազգայնաց-
մանը՝ չենքի Զորջի վոգով մի տեսակ միասնական հարկի միջոցով:
Բացարձակապես վոչ մի ուրիշ ռեալ բան չկա այն «տնտեսական հե-
ղափոխության մեջ», զոր առաջարկում և քարոզում ե Սուն-Յաթ-Սենը:

Գյուղական խուլ վայրում և Շանհայում հողի արժեքի միջն գո-
յություն ունեցող տարբերությունն այն տարբերությունն ե, զոր գո-
յություն ունի ռենտայի մեծության միջև: Այնպես անհի, զոր հողի
«արժեքի հավելումը» դառնա «ժողովրդի սեփականություն», նշանա-
կում ե հանձնել ռենտան, այսինքն հողի սեփականության իրավունքը,
պետությանը, կամ, ուրիշ խոսքով ասած՝ ազգայնացնել հողը:

Հնարավոր ե արդյոք այդպիսի ռեփորմը կապիտալիզմի շրջանակ-
ներում: Վոչ միայն հնարավոր ե, այլև դա ամենազուտ, մաքսիմալ չա-
փերով հետևողական, իդեալականապես կատարյալ կապիտալիզմ ե:
Մարքսը մատնանշել ե այս բանը «Փիլիսոփայության աղքատության»
մեջ, մանրամասնաբար ապացուցել ե «Կապիտալի» III հատորում
և առանձնապես առարկայորեն զարգացրել ե Ռոտբերտուսի դեմք ուղղ-
ված բանակովում «Հավելյալ արժեքի թեորիաների» մեջ:

Հողի ազգայնացումը հնարավորություն ե տալիս վերացնելու
բացարձակ (աբսոլուտ) ռենտան, թողնելով միմիայն դիմիքերենցիալ
ռենտան: Միջնադարյան մոնոպոլիաների և միջնադարյան հարաբերու-
թյունների մեծագույն չափերով վերացնելը հողագործության ապա-
րելից, հողն առևտրական շրջանառության մեջ դնելու մեծագույն ազա-
տությունը, հողագործությունը շուկային հարմարեցնելու մեծագույն
դյուրությունը—ահա թե ինչ ե հողի ազգայնացումն ըստ Մարքսի

ուսմունքի: Պատմության հեղնանքն այն ե, զոր նարողնիկությունը,
հանուն «պայքարի» ընդդեմ կապիտալի՝ յերկրագործության ասպա-
րիզում կիրառում ե այնպիսի ազգարային ծրագիր, զորի լիակատար
կենացգործումը կնշանակեր կապիտալիզմի ամենաարագ զարգացումը
յերկրագործության ասպարիզում:

Ի՞նչ անտեսական անհրաժեշտություն ծնէցրեց հողի նկատմամբ
ամենաառաջավոր՝ բուրժուական-դեմոկրատիկ ծրագրերի տարածումը
Ասիայի ամենահետամնաց գյուղացիական յերկներից մնկում:— Ֆեո-
դալիզմն իր բոլոր ձևերով ու արտահայտություններով կործանելու
անհրաժեշտությունը:

Զինաստանը վորքան շատ եր յետ մնում Յեվրոպայից ու Յապո-
նիայից, այնքան ավելի յեր սպառնում նրան կոտորակումն ու ազգա-
յին քայքայումը: «Վերանորոգել» Զինաստանը կարող եր միայն հե-
ղափոխական ժողովրդական ժամանակի հերոսությունը, զորն ընդու-
նակ կլիներ քաղաքականության ասպարիզում ստեղծել չինական հան-
րապետությունը, ազգարային ասպարիզում հողի ազգայնացման մի-
